

օտար ♦♦♦ գիր

# Միգել դե Ունամունո մառախուղը



Երևան  
«Անտարես»  
2013

ՀՏԴ 860 – 31 ՈՒՆԱՄՈՒՆՈ

ԳՄԴ 84(4Իսպ) – 44  
ՈՒ 520

*Իսպաներենից թարգմանեց  
ՌՌԻԶԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ*

### **Ունամունո Միգել դե**

ՈՒ 520 Մառախուղը/վեպ/ Միգել դե Ունամունո;

Իսպաներենից թարգմ.: Ռ. Պետրոսյանը.- Եր.:

Անտարես, 2013.- 240 էջ:

Իսպանական դասական արձակի վարպետ Միգել դե Ունամունոն «Մառախուղը» վեպում մի կողմից՝ շարունակում է եվրոպական փիլիսոփայական արձակի ավանդույթները, մյուս կողմից՝ փորձում է վերստեղծել ավանդական վեպի կառուցման սկզբունքները: Ունամունոյի կարծիքով՝ յուրաքանչյուր ոք, ով կարդում է որևէ վեպ, ունակ է վերապրելու և նորովի վերստեղծելու նրա իրականությունը, ուստի, յուրաքանչյուր նոր ընթերցում նոր տարրեր է հավելում ստեղծագործությանը: «Մառախուղը» պետք է ընթերցել ու ընկալել որպես իրականություն, որը կարող ես վերափոխել, բայց մինչև վերջ խորամուխ լինել նրա գաղտնիքներին՝ անկարող ես:

ՀՏԴ 860 – 31 ՈՒՆԱՄՈՒՆՈ

ԳՄԴ 84(4Իսպ) – 44

ISBN 978–9939–51–471–0



© Պետրոսյան Ռ., 2013

© «Անտարես», 2013

## «ՄԱՌԱԽՈՒՂԻ» ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Իմ այս ստեղծագործության առաջին հրատարակությունը, արդյոք միայն ի՞նք, լույս է տեսել 1914 թվականին «Վերածնունդ» գրադարանում, որը կործանեցին խաբերայություններն ու խաբերաները: Թվում է, թե գոյություն ունի 1928 թվականի երկրորդ հրատարակությունը, բայց այն ինձ հայտնի է միայն մատենագիտությունից: Ես անձամբ այն չեմ տեսել, և դա զարմանալի չէ, քանի որ բռնապետական ժամանակաշրջանում տեղի ունեցած բախումների պարզառով ինձ վտարել էին երկրից, և ես գտնվում էի Հենդայայում: 1914 թվականին, երբ ինձ վտարեցին, ավելի ձիշտ, երբ ինձ ազատեցին Սալամանկայի համալսարանի ռեկտորի պաշտոնից, համաշխարհային պատերազմի թոհոբոհը ցնցեց նաև Իսպանիան, չնայած մենք չէինք մասնակցում պատերազմին: Պատերազմն իսպանացիներին բաժանեց ֆաշիստների, հակաֆաշիստների և նույնիսկ, եթե կուզեք, Անտանտի կողմնակիցների, ընդ որում, ի դեպ, բաժանեց ըստ խառնվածքի և ոչ պատերազմական պարզառներից ելնելով: Այս իրադարձությունն ազդեց մեր հետագա պատմության վրա, մինչև, այսպես կոչված 1961 թվականի հեղափոխությունը և Բուրբոնների միապետության անկումը: Ահա այդ ժամանակ ես ինձ շրջապարված զգացի մեր Իսպանիայի, մեր Եվրոպայի, մինչևհիսկ մեր համաշխարհային փրեզերքի մառախլապար պատմության մեջ:

Այժմ 1935 թվականին, ինձ առիթ է ընձեռվում վերահրատարակելու իմ «Մառախուղը»: Այն վերանայել եմ, վերստեղծել, վերապրել իմ մեջ. վերապրելով անցյալը՝

Նրա հեղի վերստեղծվում է և հուշը: Սա նոր ստեղծագործություն է ինձ համար, և վստահ եմ, որ նոր կլինի նաև այն ընթերցողների համար, ովքեր այն կարդացել են և կրկին կկարդան, վերընթերցելիս ինձ կընթերցեն: Մի պահ մտածում էի՝ արժե՞ր արդյոք այն կրկին լույս ընծայել, նորացնել, չէ՞ որ արդեն այլ կլիներ: Այլ: Երբ այն Ավգուստո Պերեսին տեսա իմ երազում, որը գրվել է քսանմեկ տարի առաջ, այն ժամանակ ես հիսուն տարեկան էի, ենթադրում էի, որ այն ավարտին եմ հասցրել և զղջումով պատրաստվում էի հարություն տալ իմ հերոսին: Բայց նա հարցրեց, թե արդյոք ես հնարավոր էի համարում հարություն տալ Դոն Կիխոտին, նրան պատասխանեցի, որ անհնար է: Նա ասաց, որ իրենք՝ գրական հերոսները, գտնվում են նույն վիճակում: Ես նրան հարցրի. «Իսկ եթե քեզ կրկին իմ երազում տեսնե՞մ»: Նա պատասխանեց. «Երկու անգամ նույն երազը չեն տեսնում: Նրան, ում դուք կտեսնեք ձեր երազում, դա ես չեմ լինի, այլ մեկ ուրիշը»:

Ուրիշ: Որքան է ինձ հեղիսվել և շարունակում է հեղիսվել այդ ուրիշը. բավական է կարդալ իմ «Ուրիշը» ողբերգությունը: Ինչ վերաբերում է Դոն Կիխոտին հարություն տալուն, ապա կարծում եմ, որ արդեն վերակենդանացրել եմ Սերվանտեսին, և որ նրան հարություն են տալիս բոլոր նրանք, ովքեր ուսումնասիրում և լսում են նրան. ոչ թե գիտակաները, իհարկե, ոչ էլ սերվանտեսագետները: Հերոսին հարություն են տալիս այնպես, ինչպես քրիստոնյաները Քրիստոսին՝ հեղիսելով Պաբլո դե Տարսոյին: Այսպիսին է պատմությունը կամ լեգենդը. հարության այլ ձև չկա: Մտացածին էա՞ն: Իրական էա՞ն: Իրականությունից դեպի երևակայություն, թե՞ երևակայությունից դեպի իրականություն: Մի անգամ տեսա, թե ինչպես էր որդիս՝ Պեպեն, այն ժամանակ դեռ երեխա

էր, մի տիկնիկ պատկերում և ինքն իրեն ասում էր. «Ես իսկական եմ, իսկական, ոչ թե պատկերված»: Այդ բաները նա ասում էր տիկնիկի փոխարեն, այդ պահին ես վերապրեցի իմ մանկությունը, վերադարձա իմ մանկություն և հոգեհայրնության պես մի բան զգացի: Քիչ առաջ իմ թոռնիկը՝ Միգելինը, ինձ հարցրեց, թե արդյոք մանկական հեքիաթների կարու Ֆելիքսն իսկական է, այսինքն՝ կենդանի: Իսկ երբ նրան ներշնչելու համար ասացի, որ կարուն հեքիաթ է, հորինվածք, երազ, նա ինձ պատասխանեց.

– Բայց իսկական երազ, այնպես չէ՞:

Ահա սա է մերաֆիզիկան: Մրածեցի նաև շարունակել Ավգուստո Պերեսի կենսագրությունը, պարմել մյուս աշխարհում նրա կյանքի մասին: Բայց մյուս աշխարհը և մյուս կյանքը այս աշխարհի և այս կյանքի մասն են կազմում, և ցանկացած հերոս ունի իր կենսագրությունը, համաշխարհային իր պարմությունը, ինչի համար նրան անվանում ենք պարմական, գրական կամ ֆանտաստիկ հերոս: Մի պահ մտքովս անցավ իմ Ավգուստոյին ստիպել ինքնակենսագրություն գրել, որում նա ինձ կդիմեր և կպարմեր, թե ինչպես է ինքն իրեն տեսել իր երազում: Եվ այսպես՝ այս պարմությանը տրվում են երկու տարբեր եզրահանգումներ, երկու զուգահեռներ, որպեսզի ընթերցողն ինքն ընտրի դրանցից մեկը: Բայց ընթերցողն ամեն բան չէ, որ կհանդուրժի. նա չի հանդուրժի, որ իրեն ընկղմեն երազի երազում, գիտակցության սարսափելի գիտակցության մեջ. սա է ցավալի խնդիրը: Ընթերցողը չի ցանկանում, որ իրենից խլեն իրականության իր պարմանքը: Ասում են՝ մի գեղջուկ քարոզիչ, որ նկարագրում էր Քրիստոսի չարչարանքները, լսելով, թե ինչպես են բարձրաձայն հեկեկում բարեպաշտ գեղջուկիները, բացականչում է. «Այդպես մի՛ արտասվեք,

քանի որ սա տեղի է ունեցել ավելի քան տասնինը դար առաջ, և բացի այդ, հայրնի չէ՛ եղել է արդյոք ծիշտ այնպես, ինչպես ես եմ ձեզ պատմում»:

Այլ դեպքերում ունկնդիրներին պետք է ասել, որ գուցե հենց այդպես էլ եղել է: Ինձ շատ են պատմել նաև հնագետ-ճարտարապետի մասին, ով ուզում էր ավերել տասներորդ դարի մի տաճար ոչ թե վերանորոգելու, այլ վերակառուցելու այնպիսին, ինչպիսին պետք է կառուցված լիներ և ոչ այնպես, ինչպես կառուցվել էր՝ համաձայն այն ժամանակաշրջանի ճարտարագետի գծագրի, որը վստահեցնում էր, թե ինքն էր գտել: Նախագի՞ծ: Մեր ճարտարապետը չգիտեր, որ տասներորդ դարում տաճարներն իրենք իրենց էին կառուցվել՝ մի կողմ թողնելով նախագծերը, խուսափելով շինարարների ձեռքերից: Նույն կերպ էպոսի, դրամայի համար սրեղծվում է պլան, բայց հեղինակը կարծում է, որ վեպը, էպոսը կամ դրաման հակադրվում են նրան, ինչ հեղինակն է ասում: Կամ հակադրվում են հերոսները՝ հորինված կերպարները: Այսպես սկզբում հակադրվեցին Լուգրելը և Սաբանան, Ադամն ու Եվան: Եվ սա է իսկական նիվոյան, էպոսը կամ ողբերգությունը: Նույն կերպ ինձ հակադրվեց Ավգուստո Պերեսը:

«Մառախուղը» ողբերգությունը նկատեց Ալեխանդրո Պլանան՝ կարալոնացի իմ լավ ընկերը: Մնացածները իրենց մտավոր ծովույթյան պարզառով հիմնվեցին իմ սաբանայական գյուրի՝ հորինված ժանրի՝ նիվոյայի վրա: Գիրքը նիվոյա անվանելու գաղափարն իրականում ինձ չէր պատկանում, ինչպես փաստում եմ տեքստում, դա ընդամենը քննադատներին գրավելու խայժ էր: Թող սա լինի նովել, ինչպես իմ մյուս նովելները, բայց թող կոչվի նիվոյա, քանի որ մեզ համար կոչվել նշանակում է լինել: Ինչպիսի՞ հիմարություն, թվում է, թե արդեն անցել

են նիվոլայի ժամանակները կամ էրոտիկ բանաստեղծությունների դարաշրջանը, բայց քանի դեռ կենդանի են անցած դարերի վեպերը, վեպը միշտ կասպրի և կվերածնվի: Միայն թե պեքը է այն վերասպրել երազում: Դեռ չէին փորացել իմ երազներին Ավգուստո Պերեսը և նրա նիվոլան, երբ երազումս արդեն վերասպրել էի կարլիս-տական պատերազմները, որոնց ականատեսն էի եղել մանուկ հասակում և գրեցի «Խաղաղություն պատերազմում» պատմավեպը կամ, ավելի ճիշտ՝ ռոմանականացված վեպը՝ համաձայն այն ժանրի ուղղության սկզբունքների, որը կոչվում է ռեալիզմ: Այն, ինչ ապրել էի փաստ փարում, վերասպրեցի երեսուն փարեկանում, երբ գրում էի այս վեպը: Եվ շարունակում եմ վերասպրել այժմյան պատմությունը, որն անցնում է աչքիս առաջ: Պատմությունը գալիս է և մնում: Երազումս տեսա 1902 թվականին փպագրված «Սեր և մանկավարժություն» ցավալի ողբերգությունը, գոնե ինձ համար այն ցավալի է եղել: Այն գրելիս հույս ունեի ազատվել այդ փառապանքներից և դրանք փոխանցել ընթերցողին: «Մառախուղ» ստեղծագործության մեջ կրկին հայտնվում է փրագիկոմեդիկ, մշուշով ողողված նիվոլային դոն Ավիտո Կառասկալը, ով Ավգուստոյին ասում է, որ միայն ապրելով են սովորում ապրել, ինչպես որ երազներն են մեզ սովորեցնում երազել: Ապա, 1905 թվականին դրան հաջորդեց «Դոն Կիխոտի և Սանչոյի կյանքը՝ ըստ Միգել դե Սերվանտես Սաավեդրայի» ստեղծագործությունը բացաբրություններով և մեկնաբանություններով: Բայց այն գրեցի ոչ հենց այնպես, այլ միայն մտքում պարկերացնելուց հետո: Դուք կասեք, որ իմ Դոն Կիխոտը և Սանչոն նման չեն Սերվանտեսի գործերին: Եվ ի՞նչ: Դոն Կիխոտը և Սանչո Պանսան մեր մեջ են, ողջ հավերժությունը բոլոր ժամանակներում և ողջ հավերժությունը նրա յուրաքանչյուր

պահի մեջ, դրանք պատկանում են ոչ միայն Սերվանտե-սին, ինձ կամ մեկ ուրիշին, այլ բոլոր նրանց, ովքեր նրանց տեսնում են իրենց երազներում, բայց մեզնից յուրաքան-չյուրն այն վերապրում է: Ինչ վերաբերում է ինձ, կարծում եմ, որ Դոն Կիխոտը թաքցրել է Սերվանտեսից իր նվիրական գաղտնիքները, հատկապես՝ Ալդոնսա Լորենսոյի հանդեպ տաժաժ սիրո գաղտնիքը:

1913 թվականին, մինչ «Մառախուղ»-ի լույս տեսնելը, հրատարակվեցին իմ պարմվածքները, որոնք ամփոփված են «Մահվան հայելին» գրքի մեջ: «Մառախուղ»-ից հետո՝ 1917 թվականին, ես տպագրեցի «Աբել Սանչես»-ը՝ պարմություն, որն իմ հաղթահարած բոլոր փորձություններից ամենաբանջալիս էր, երբ գրիչս թաթախեցի մարդկությանը հատուկ սարսափելի թույնի մեջ: 1921 թվականին տպագրեցի «Հորաքույր Տոլան» վեպը, որը վերջերս գերմաներեն, հոլանդերեն և շվեդերեն թարգմանությունների շնորհիվ մեծ ընդունելություն գտավ Կենտրոնական Եվրոպայի Ֆրեյդլանդ շրջանակներում: Հաջորդ վեպը լույս տեսավ 1927 թվականին Բուենոս-Այրեսում՝ «Ինչպես է սրտը ծվում վեպը» վերնագրով՝ ինքնակենսագրական մի գիրք, որը նվիրված էր իմ բարի ընկեր և հրաշալի քննադատ Էդուարդ Գոմես դե Բակերոյիին: Անդրենիոն իր սրամտությամբ իմ նիվոլայի պես ծուղակն ընկավ, նա հայտարարեց, թե իբր, իր կարծիքով, ես վեպում գրել եմ այն մասին, թե ինչպես պետք է վեպ գրել: Վերջապես 1993 թվականին հրատարակվեց «Սուրբ Մանուել Բարին, նահապարակը և պարմվածքները» սրտեղծագործությունը: Դրանք բոլորն էլ ծնվել են մառախլապատ տեսիլքներից:

Իմ գրքերն արժանացել են թարգմանված լինելու պատվին, դրանք թարգմանվել են առանց իմ միջամտության, թարգմանվել են, որքան ինձ հայտնի է, տասնհինգ



լեզվով՝ գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն, անգլերեն, հոլանդերեն, շվեդերեն, դանիերեն, ռուսերեն, լեհերեն, չեխերեն, հունգարերեն, ռումիներեն, խորվաթերեն, հունարեն և լատիշերեն: Բայց ամենաշարք թարգմանվել է «Մառախուղը»:

1921 թվականի սկզբին՝ յոթ տարի հետո, Ջիլբերտո Բեկառին Էջիո Լեվիի նախաբանով թարգմանում է «Մառախուղը», 1922 թվականին հունգարերեն թարգմանում է Գարադի Վիկտորը, 1926-ին՝ ֆրանսերեն՝ Բրոուիյարդը, 1927-ին՝ գերմաներեն՝ Նոեմի Լախյոր (Մյունխեն), 1928-ին՝ շվեդերեն՝ Դիման կոդմից, անգլերեն՝ Ալլան Վուլթը (Նյու Յորք), լեհերեն (Վարշավա)՝ բժիշկ Էդվարդ Բայեն, 1929 թվականին՝ ռումիներեն (Բուխարեստ), խորվաթերեն՝ Սեբաստիանի թարգմանությամբ և, ի վերջո, 1935-ին Ռիգայում թարգմանվում է լատվիերեն Կոնստանտին Ռաուդիվիլի կոդմից: Ընդամենը տասը թարգմանություն, որոնք ավելին են, քան իմ «Երեք խրատական նովել և մեկ նախաբան» գիրքը, որն իր մեջ ներառում է նաև «Իսկական տղամարդը» սրեղծագործությունը:

Ինչո՞ւ նման նախընտրություն: Ինչո՞ւ օտարալեզու ազգերին իմ մնացած սրեղծագործություններից հենց դա է ավելի գրավել, որը գերմանացի թարգմանիչ Օտտո Բուլկն անվանել է «ֆանտաստիկ վեպ», իսկ ամերիկացի Ուորներ Ֆախորը՝ «ողբերգական վեպ»: Ակնհայտ է, որ ֆանտաստիկայի և տրագիկոմեդիայի պատճառով: Ես չեմ սխալվել, երբ հենց սկզբում ենթադրում էի, որ իմ այս գիրքը, որը կոչվում է նիվոլա, ավելի մեծ տարածում կգտնի, բայց ոչ իմ «Կյանքի հանդեպ ողբերգական զգացումը» սրեղծագործությունը վեց թարգմանությամբ, որովհետև այն պահանջում է փիլիսոփայական և աստվածաբանական որոշակի գիտելիքներ և ավելի տարածված է, քան մենք կարծում ենք, և դա էր պատճառը,

որ ինձ զարմացրեց այդ գրքի հաջողությունը Իսպանիայում: Ոչ «Դոն Կիխոտի և Սանչոյի կյանքը» երեք թարգմանությամբ, ոչ Սերվանտեսի «Դոն Կիխոտ»-ը այնքան հայրնի չեն և ավելի քիչ ծանաչում ունեն հայրկապես Իսպանիայից դուրս, իսկ Իսպանիայի ներսում՝ ոչ այնքան. այդպես են կարծում մեր հայրենակից գրականագետները: Ես նույնիսկ կհամարձակվեմ ասել, որ այնպիսի սրեղծագործություններ, ինչպիսին իմն է, կնպաստեն նրան, որ «Դոն Կիխոտ»-ին ավելի շարք և ավելի լավ ծանաչեն, հենց իմ այս գրքից և ոչ թե ինչ-որ այլ գրքից: Միգուցե ազգային նկարագրի՞ համար: Բայց իմ «Խաղաղություն պատերազմում» սրեղծագործությունը թարգմանվել է գերմաներեն և չեխերեն, ակնհայտ է, որ իմ «Մառախուղի» ֆանտազիան և տրագիկոմեդիան ավելի շարք խոսում է մարդու՝ որպես անհատականության մասին, ընդհանրապես մարդու, ով միաժամանակ գրնվում է բոլոր դասերի վերևում և ներքևում՝ հարուստ թե աղքատ, ռամիկ թե ազնվական, աշխատավոր թե բուրժուա: Եվ սա քաջ հայրնի է մշակույթի գիտականերին, որոնց կոչում են գիտնականներ: Նախաբանի մեծ մասը՝ մերալուզը, որը կարող են կոչել նաև ինքնաքննադարություն, ձգտելով սևացնել իմ «Մառախուղ»-ը, ինձ ներշնչել է գրել անձամբ դոն Անտոյին Սանչես Պապառիգոյուր, ում կերպարն ի հայտ է գալիս քսաներեքերորդ գլխում, չնայած ինձ չի հաջողվել նախաբանում գործի դնել անկասելի և խորաթափանց հեղազոտողի խիստ մեթոդը: Ա՛խ, եթե միայն կարողանայի, հեղուկ չլի նրա գաղափարներին, զբաղվել մարդկանց պատմությունների ուսումնասիրությամբ, այն մարդկանց, ովքեր մրաժեղ են գրի առնել դրանք, բայց այդպես էլ չեն գրել: Նույնը կարելի է ասել մեր լավագույն ընթերցողների, համագործակցողների և հեղինակների, ավելի

ճիշտ՝ համահեղինակների մասին, ովքեր, կարդալով որ-  
և՛ է պարմություն կամ նիվոլա, ինչպիսին սա է, ասում են.  
«Բայց չէ՞ որ ես ինքս էլ նույն կերպ էի մրաժում դեռ շաք  
վաղուց, այո, ես ճանաչում եմ այս հերոսին, իմ մրքով  
հենց նա էլ անցել է»:

Նրանք փարբերվում են ինքնավարահ այն բռններից,  
ովքեր մշտապես անհանգստացած են նրանով, ինչը կոչ-  
վում է ճշմարտանմանություն: Կամ նրանք, ովքեր կար-  
ծում են, թե իրենք միշտ սթափ են, չեն իմանում, որ իրա-  
կանում սթափ է միայն նա, ով գիտակցում է, որ երազ  
է փեսնում, հիրավի, խելամիտ է նա, ով գիտակցում է  
սեփական խենթությունը: Նա, ով չի շփոթում, շփոթ-  
վում է, ինչպես իմ բարեկամ Վիկտոր Գոթին էր ասում  
Ավգուստո Պերեսին:

Աշխարհը, որտեղ ապրում են իմ Պեդրո Անտոնի-  
ոն, Խոսեֆա Իգնասիան, Ավգուստո Պերեսը, Էուխե-  
նիա Դոմինգոն, Ռոսարիոն, «Իսկական փղամարդը»  
սպեղծագործության հերոսները՝ Ալեխանդրո Գոմեսը,  
Խոպիան, Խուակին Մոնեգրոն, Աբել Սանչեսը և Էլենան,  
Հորաքոյր Տուլան, նրա քույրը, փեսան և զարմիկները,  
Սուրբ Մանուել Բարին և Անխելա Կարբայինոն (հրեշ-  
փակ չէ), դոն Սանդալիոն, Էմպերիո Ալֆոնսոն և Սելե-  
դոնիո Իբանեսը, Ռիկարդոն և Լիդովիանան, այս ամբողջ  
աշխարհն ավելի իրական է ինձ համար, քան Կանովա-  
սի, Սագասարայի, Ալֆոնս 13-րդի, Պրիմո դե Ռիվերայի,  
Գալդոսի, Պերեդայի, Մենենդեսի և Պելայոյի և մյուսնե-  
րի աշխարհը, որոնց ճանաչել և ճանաչում եմ մինչև հի-  
մա, որոնց հանդիպել և հանդիպում եմ մինչև հիմա: Իմ  
աշխարհում ինձ ներկայացնում եմ շաք ավելի լավ, եթե,  
իհարկե, ընդհանրապես ներկայացնում եմ, քան մյուսնե-  
րի աշխարհում: Բացի այդ երկու աշխարհից, կա նաև մի  
ուրիշ՝ նյութական և հավերժական աշխարհ, որտեղ իմ

երազում Կրեսնում եմ ինքս ինձ և բոլոր նրանց, ովքեր եղել են (իսկ շատերը կան մինչև հիմա)։ այդ աշխարհը իմ հոգին և մարմինն է, մարմինն ու հոգին, գիտակցության աշխարհ, որը չունի ո՛չ փարածություն, ո՛չ ժամանակ, որպես իմ մարմնի գիտակցությունն ապրում է ինչպես այիքը ծովում։

Երբ հրաժարվեցի Ավգուստո Պերեսին փրկել, վերջինս ասաց.

– Դուք չե՞ք ուզում ինձ թողնել իմ «ես»–ը, թույլ մի՛ Կվեք ինձ դուրս գալ մառախուղից, ապրել, ապրել, ապրել, Կրեսնել ինձ, լսել ինձ, դիպչել ինձ, ցավ զգալ, ապրել։ Ուրեմն դուք դա չե՞ք ուզում։ Ուրեմն ես պետք է մեռնեմ որպես հորինված կերպան։ Լավ, իմ սիրելի արարիչ դոն Միգել, դուք նույնպես կմեռնեք և կվերադառնաք այն ոչնչին, որպեսզի եկել եք։ Աստված կդադարի Կրեսնել ձեզ իր երազում։ Դուք կմեռնեք, այո, նույնիսկ եթե չուզեք, կմեռնեք դուք և բոլորը, նրանք, ովքեր կարդում են իմ պատմությունը, բացառապես բոլորը։ Հորինված կերպարները, ինչպիսին ես եմ, կմեռնենք բոլորս։

Այդպես նա ինձ ասաց, և արդեն քսան փարի է՝ ականջներիս մեջ անընդհատ հնչում են նրա ահաբեկող խոսքերը՝ հազիվ լսելի շշուկներ, ինչպես Եհովայի աստվածաշնչյան ձայնը՝ մարգարեական և սարսափազդու այդ խոսքերը։ Այդ ամբողջ ընթացքում միայն ես չե, որ մեռնում էի, մեռան և մեռնում էին իմ հարազատները, նրանք, ովքեր ինձ ավելի լավն էին Կրեսնում իրենց երազներում։ Կյանքը հեռանում էր ինձից սկզբում կաթիլ առ կաթիլ, իսկ հետո՝ առափորեն։ Խղճուկ բթամիտները կարծում են, թե ես Կրեսնում եմ այն պատճառով, որ մահկանացու եմ։ Խղճուկ բթամիտներ։ Ոչ, ես Կրեսնում եմ բոլոր նրանց համար, ում Կրեսնել և Կրեսնում եմ իմ երազում, բոլոր նրանց համար, ովքեր Կրեսնել և Կրեսնում

են ինձ իրենց երազում, քանի որ անմահությունը, ինչպես երազը, փրված է կամ բոլորին, կամ ոչ ոքի: Չեմ կարողանում հիշել որևէ դեպք, որ մարդիկ՝ նրանք, որոնց հասկապես ճանաչել եմ (իսկ ճանաչել, նշանակում է սիրել, եթե նույնիսկ կարծում ես, թե ապում ես), գնային առանց թաքուն ասելու. «Դու հիմա ի՞նչ ես: Ի՞նչ եղավ գիտակցությանդ հետ: Հիմա ես ի՞նչ եմ քո գիտակցության մեջ: Ի՞նչ եղավ իմ նախկին «ես»-ի հետ»:

Հենց սա է մառախուղը՝ մառախուղ, լեգենդ, հավերժական կյանք... Սա է արարող, ննջեցնող բառը: Լեռպարդին ունի ողբերգական մի հրաշալի երազափետություն, որը կոչվում է «Վայրի աքաղաղի երգը». մի առեղիվառ աքաղաղի մասին է, որը վերցված է Աստվածաշնչից, աքաղաղ, որը երգում է հավերժական հայրնության մասին և մահացածներին հարության կոչ անում: Երգն ավարտվում է այսպես. կգա ժամանակ, երբ փեղերքը և բնությունը կսպառեն իրենց, և ինչպես որ չի մնացել հսկայական թագավորությունների և մարդկային հասարակությունների՝ հնագույն ժամանակներում հայրնի հրաշալի սխրանքներից ոչ մի հետք և ոչ էլ փառք, այնպես էլ ողջ աշխարհից և սրբեղծված իրերից, անթիվ արարներից և չարիքից չի մնացել ոչինչ, մնացել է միայն կատարյալ լռություն և շար խոր խաղաղություն, որոնք անսահման փարածություն են լցնում: Այսպիսով, փեղերքի գոյության հիանալի, բայց և սարսափելի՝ դեռևս չբացահայտված և անմեկնելի առեղծվածը ոչնչից ծնվում և անհետանում է:

Բայց ոչ, պետք է մնա աքաղաղի երգը և նրա հետ պիտի մնա Եհովայի շունջը, պետք է մնա Բանը, որ առաջինն է եղել և վերջինը կլինի, թող մնա քամին, որ մեզ փրված է ի վերուստ մառախուղները ցրելու և նրանց ձևերը կերտելու համար: Ավգուստո Պերեսը

բացահայտում է մեզ և բոլոր նրանց, ովքեր եղել են և կան ինձնով, մեզ բոլորիս, որ Աստուծու երազն ենք, այլ կերպ ասած՝ նրա Խոսքի երազը, որը հայտնում է մեզ, թե պիտի մեռնենք: Այո, մեռնում է ժամփորդող մարմինը, բայց ոչ երազինը, ոչ գիտակցության մարմինը: Դրա համար եմ ձեզ ասում, որ իմ Ավգուստո Պերեսը և նրա աշխարհը մառախուղ չեն, դա նիվոլան է, լեգենդը, դա է հենց հավերժական կյանքը:

Սալամանկա,  
1935 թվական, փետրվար

## Գլուխ 1

Դուրս գալով տնից՝ Ավգուստոն աջ ձեռքի բաց ափը ձգեց առաջ, մի պահ աչքերը հառեց երկնքին և հիացմունքից քարացած՝ մնաց տեղում կանգնած: Ոչ, Ավգուստոն չէր ձգտում տիրանալ արտաքին աշխարհին, պարզապես ստուգում էր, թե արդյոք պիտի անձրևեր: Եվ ձեռքի ափի մեջ զգալով սառը անձրևի խոնավությունը՝ ունքերը կիսեց ոչ այն պատճառով, որ նրան անհանգստացնում էր անձրևը, այլ որովհետև ստիպված պիտի լիներ բացել անձրևանոցը, անչափ կոկիկ, նուրբ և ծավված անձրևանոցը հանել պատյանից: Փակ անձրևանոցն այնքան կոկիկ է, որքան որ կոկիկ չէ բացվածը: «Իսկական անհաջողություն, երբ ստիպված ես օգտագործել ինչ-որ բան, - մտածեց Ավգուստոն: - Օգտագործելը փչացնում է, նույնիսկ խեղաթյուրում է ողջ գեղեցկությունը: Իրերի ամենաարժանի առաքելությունն այն է, որ դրանց նայելով հիանան: Որքա՞ն գեղեցիկ է նարինջը, քանի դեռ այն չեն կերել: Այս խղճուկ կյանքում մենք միայն մտածում ենք, թե ինչպես օգտվել Աստծու արարչագործություններից, մենք կուզեինք նրան բացել այնպես, ինչպես անձրևանոցն են բացում, որպեսզի նա մեզ պաշտպաներ բոլոր չարիքներից»: Ինքն իր հետ խոսելով՝ Ավգուստոն կռացավ տաբատի փողքերը ծալելու: Ի վերջո, բացեց անձրևանոցը և մտքերի մեջ ընկավ. «Իսկ հիմա ո՞ր եմ գնալու, ա՞ջ, թե՞ ձախ»: Ավգուստոն կյանքում ոչ թե ճանապարհորդ էր, այլ պարզապես անցորդ: «Կսպասեմ մինչև որևէ շուն անցնի և կգնամ այն ճանապարհով, որով նա կգնա»:

Այդ պահին փողոցով անցավ ոչ թե ինչ–որ շուն, այլ գեղեցիկ հագնված մի սլացիկ աղջիկ, Ավգուստոն կամա թե ակամա մագնիսի պես հետևեց աղջկան: Այսպես նա անցնում էր փողոցից փողոց:

«Տեսնես ի՞նչ է անում այս տղան,– ինքն իրեն ասաց Ավգուստոն, որն ավելի շատ մտնտում, քան խոսում էր ինքն իր հետ:– Նա, ով պառկած է հողի վրա, հավանաբար մրջյուններին է զննում: Բա՛հ, մրջյունն ամենաերկերեսանի կենդանիներից մեկն է, բացի զբոսնելուց ոչինչ չի անում, իսկ մենք կարծում ենք, թե նա աշխատում է իսկ և իսկ այն անբանի պես, որ գալիս է այստեղ բոլորին փուփուտ հրելով, բայց կասկած չկա, որ նույնիսկ ասելու բան չունի: Պորտաբույծի մեկն է, ինչպես... ոչ, ես պորտաբույծ չեմ: Իմ երևակայությունն անխոնջ աշխատում է: Նրանք են ծուլերը, նրանք, ովքեր ասում են, թե աշխատում են, բայց շշմածի մեկն են, միայն իրենց մտքերն են սպառում խոսելով: Օրինակ՝ այն թեթևամիտ շոկոլադ վաճառողը, որ կանգնած է ցուցափեղկի մոտ, ջանում է, որ մենք տեսնենք, թե ինչպես է այդ ցուցամոլն աշխատում: Մի՞թե նա ծուլ չէ: Մեզ ի՞նչ նա աշխատում է, թե ոչ: Աշխատա՛նք, աշխատա՛նք: Դա երկերեսանիություն է: Նա, ով իսկապես աշխատում և տքնում է, այն խեղճ անդամալույծն է, ով քայլելիս հագիվ է ոտքերը քարշ տալիս: Բայց ինձ ի՞նչ: Ներիր, եղբայր,– բարձրաձայն ասաց ինքն իրեն:– Եղբայր, եղբայրություն, եղբայրություն կաթվածահարության մե՞ջ: Ասում են, որ բոլորս Ադամի զավակներն ենք: Այդ Խուակինիտոն նույնպե՛ս Ադամի զավակն է: Ցտեսություն, Խուակին: Ահա մեքենան արդեն սլանում է, շարժիչի ձայնն արդեն աղմկում է. ո՞րն է տարածություններ կրճատելու իմաստը: Ճանապարհորդելու մոլուցքը գալիս է տոպոֆոբիայից, այսինքն՝ ճանապարհորդության հանդեպ վախից և ոչ թե ֆիլոտոպիայից՝ ճանապարհորդության հանդեպ սիրուց:



Նա, ով շատ է ճանապարհորդում, փախչում է այն վայրերից, որտեղ եղել է, ոչ թե ձգտում է այնտեղ, ուր ժամանում է: Ճանապարհորդել, ճանապարհորդել: Ա՛խ, ինչ անհարմար է այս անձրևանոցով... Տե՛ր Աստված, սա ի՞նչ է»:

Նա կանգնեց մի տան շենի, ուր ներս մտավ սլացիկ այն աղջիկը, ում աչքերը մագնիսի պես դեպի իրենց ձգեցին Ավգուստոյին: Միայն այդ պահին Ավգուստոն գլխի ընկավ, որ հետևել էր աղջկան: Սպասուհին խորամանկ աչքերով նայեց Ավգուստոյին, իսկ նրա հայացքից Ավգուստոն հասկացավ, թե ինչ պետք է անել: «Այս Ցերբերը սպասում է, որ ես հարցնեմ նրան, թե ինչ է այն օրիորդի անունը, որին հետևել եմ, իհարկե, ես այդպես էլ կանեմ: Այլ կլիներ, եթե դադարեի նրան հետևել, բայց ոչ, կիսատը պետք է ավարտին հասցնել: Ատում եմ կիսատ թողնելը»: Ձեռքը տարավ գրպանը և միայն մեկ դուրո գտավ, մետաղադրամը փոխելու ժամանակ չկար, ժամանակ կկորցնեի և առիթը բաց կթողնեի:

– Ասացեք, բարի կին,– նրան դիմեց Ավգուստոն՝ առանց գրպանից հանելու բթամատն ու ցուցամատը:– Կարո՞ղ եք ասել ինձ, վստահեցնում եմ, որ դա մեր մեջ կմնա, այն օրիորդի անունը, որ հենց նոր դուրս եկավ:

– Պարոն, դա ոչ գաղտնիք է, ոչ էլ որևէ վատ բան կա դրանում:

– Ավելի լավ:

– Նրա անունն է Էուֆենիա Դոմինգո դել Արկո:

– Դոմինգո, միգուցե Դոմինգա՞:

– Ոչ, պարոն, Դոմինգո, Դոմինգոն նրա ազգանվան առաջին մասն է:

– Բայց, երբ խոսքը կնոջ մասին է, նրա ազգանունը պետք է լինի Դոմինգա, հակառակ դեպքում ո՞ր մնաց սեռերի համաձայնությունը:

– Ես նրան չեմ ճանաչում, պարոն:

– Ասացեք ինձ,– մատները դեռևս գրպանում՝ ասաց Ավգուստոն,– ինչպե՞ս է նա համարձակվում առանց ուղեկցության դուրս գալ տնից, նա օրիորդ է, թե՞ ամուսնացած, ծնողներ ունի՞:

– Նա ամուսնացած չէ և որք է, ապրում է ազգականների հետ:

– Հորակա՞ն, թե՞ մորական:

– Միայն գիտեմ, որ ազգականներն են:

– Այդքանն էլ բավական է:

– Նա դաշնամուրի դասեր է տալիս:

– Լա՞վ է նվագում:

– Դե՛... չգիտեմ:

– Լավ, լավ, բավական է, և ներեցե՞ք պատճառած անհանգստության համար:

– Շնորհակալություն, պարոն, շնորհակալություն: Կարո՞ղ եմ ձեզ օգտակար լինել: Կուզենայի՞ք երկտող ուղարկել:

– Միգուցե, միգուցե: Բայց ոչ հիմա: Ցտեսություն:

– Ես ձեր տրամադրության տակ եմ, պարոն, դուք կարող եք լիովին հույս դնել ինձ վրա:

«Եվ ուրեմն, պարոն,– ասում էր Ավգուստոն ինքն իրեն սպասուհուց բաժանվելուց հետո,– դուք տեսաք, թե ես ինչպես պայմանավորվեցի այդ լավ կնոջ հետ: Հիմա պարզապես ես չեմ կարող ամեն ինչ այսպես թողնել: Ի՞նչ կմտածի իմ մասին այս օրինակելի սպասուհին: Ուրեմն՝ էովսենիա Դոմինգա, ոչ, Դոմինգո դել Արկո: Շատ լավ, կնշեմ նրա ազգանունը, այնպես չլինի, որ մոռանամ: Չկա հիշողությունը մարզող ավելի լավ բան, քան հուշերի գիրքը գրպանում պահելը: Իմ անմոռանալի դոն Լեոնսիոն ասում էր. «Գլխիդ մեջ մի՛ պահիր այն, ինչը կտեղավորվի գրպանումդ»: Դրան ի հավելումս պետք է ավելացնեք. «Մի՛ տեղավորեք ձեր գրպանում այն, ինչը

կտեղավորվի ձեր գլխում»: Իսկ սպասուհի՞ն: Ի՞նչ էր նրա անունը»:

Մի քանի քայլ հետ գնաց:

– Ինձ մի բան էլ ասեք, բարի կին:

– Հրամայեք:

– Ի՞նչ է ձեր անունը:

– Ի՞մը, Մարգարիտա:

– Շատ լավ, շատ լավ, շնորհակալություն:

– Խնդրեմ:

Ավգուստոն կրկին սկսեց քայլել և քիչ հետո հայտնվեց Ալամեդայի պուրակում: Անձրևը դադարել էր: Նա փակեց, ծալեց անձրևանոցը և դրեց պատյանի մեջ: Մոտեցավ նստարանին, շոշափեց այն, նկատեց, որ խոնավ էր: Հանեց թերթը, փռեց նստարանին և նստեց: Հետո բացեց նոթատետրը և շարժելով ինքնահոսը, սկսեց գրել:

«Ահա և մի շատ օգտակար բան, հակառակ դեպքում ստիպված պիտի լինեի մատիտով նշել այդ օրիորդի անունը, իսկ այդ դեպքում այն կարող էր ջնջվել: Կջնջվե՞ր արդյոք այդ օրիորդի պատկերն իմ հիշողությունից: Բայց ինչպիսի՞ն է նա, ինչպիսի՞ն է քաղցր էուխենիան: Ես միայն նրա աչքերն եմ հիշում: Այդ հրաշալի աչքերն ասես կախարդել են ինձ: Մինչ ես տրվել էի լիրիկական խոհերին, մեկի նուրբ և քաղցր հայացքը դեպի իրեն էր ձգում սիրտս: Տեսնենք, էուխենիա Դոմինգո, այո, Դոմինգո դել Արկո: Դոմինգո՞: Ոչ մի կերպ չեմ կարողանում համակերպվել այն բանի հետ, որ նրան այդպես են անվանում: Ոչ, հարկ կլինի ստիպել նրան փոխել իր ազգանունը և դառնալ Դոմինգա: Բայց մեր արու զավակները մի՞թե պետք է երկրորդ ազգանուն ունենան. Դոմինգա՞: Իմ զգվելի Պերես ազգանունը կոչնչացվի, կկարճեցվի, կմնա միայն Պ–ն, և ուրեմն մեր առաջնեկը պիտի կոչվի

Ավգուստո Պ. Դոմինգա անունով: Օ՛, այս ո՞ր հասցրիր ինձ, իմ խենթ երևակայություն»:

Ավգուստոն նոթատետրում գրեց. «Էուխենիա Դոմինգո դել Արկո, Ավենիդա պողոտա 58»: Այս հասցեի վերևում գրված էին բանաստեղծական տողեր.

«Տխրությունը և ուրախությունը մեզ ուղեկցում են դեռ օրորոցից»:

«Ահա սա էուխենիան է,- ինքն իրեն ասաց Ավգուստոն,- էուխենիան՝ երաժշտության ուսուցչուհին, նա, ով ընդհատեց իմ լիրիկական բանաստեղծության հրաշալի սկիզբը: Այն անավարտ մնաց, անավա՛րտ: Այո, իրադարձություններում և ճակատագրի վայրիվերումներում մենք միայն բավարարություն ենք փնտրում ի ծնե մեզ տրված տխրությունների և ուրախությունների համար: Միևնույն դիպվածը տխուր կամ ուրախալի է մեզ համար՝ համաձայն ծնվելու մեր դիրքի: Իսկ էուխենիա՞ն: Պետք է գրել նրան, բայց ոչ այստեղ, այլ տանը: Ավելի լավ չի՞ լինի գնալ խաղատուն: Ոչ, տուն, տուն: Նման բաները պետք է տանը անել՝ օջախում: Օջախ: Իմ տունը օջախ չէ: Օջախ... օջախ... Ավելի ճիշտ մոխրաման է: Ա՛խ, իմ էուխենիա»:

Ավգուստոն վերադարձավ տուն:

## Գլուխ 2

Դուռը բացեց սպասյակը:

Ավգուստոն հարուստ էր և միայնակ, վեց ամիս էր անցել այն օրից, երբ մահացավ ծեր մայրը, այսպիսով, Ավգուստոն ապրում էր ծառայի և խոհարարուհու հետ. նրանք այն ծառաների երեխաներն էին, ովքեր վաղուց ծառայել էին Պերեսների տանը: Սպասյակը և խոհարարուհին ամուսնացած էին, բայց երեխաներ չունեին: